

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻԶԵՎԱՆԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

26.12.2015թ.

ք. Իջևան

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 35 անդամներից 30-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ս. Ա. Առաքելյանը:

Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը բացելով գիտական խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՊՀ ԻՄ-ի 2014-15թթ. ուսումնական տարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը: /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/
2. ԵՊՀ ԻՄ-ի 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին: /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/
3. ԵՊՀ ԻՄ-ի 2016թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջե) հաստատում: /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/
4. ԵՊՀ ԻՄ-ի 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի կատաման մասին: /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/
5. ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի քննարկում: /Զեկուցող Ս.Ա. Առաքելյան/
6. Ընթացիկ հարցեր.
- I. ԵՊՀ ԻՄ-ում ուսանողական նպաստների պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություն

կատարելու համար ձևավորված հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին:

- II. ԵՊՀ ԻՄ-ում կառուցվածքային փոփոխություններ կատարելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին:
- III. ԵՊՀ ԻՄ-ի զինանշանի, դրոշի, օրհներգի և հուշամեդալի էսքիզների, տեքստի և երաժշտության ստեղծագործման նպատակով ստեղծված հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին:
- IV. ԵՊՀ ԻՄ-ի տնօրինության կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին:
- V. ԵՊՀ ԻՄ-ի ակադեմիական ազնվության կանոնակարգը հաստատելու մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին – « ԵՊՀ ԻՄ-ի՝ 2014-2015 ուստարվա գործունեության վերաբերյալ տնօրենի հաշվետվությունը» հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը կցվում է ամբողջությամբ (Հավելված 1):

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրաբյանը, այլ ստորաբաժանումների ղեկավարներ:

1. Հավանությունն տալ 2014-2015 ուստարվա ընթացքում Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ տնօրենի հաշվետվությանը:
2. Հավանությունն տալ 2011-2015թթ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրով 2014-2015 ուստարում նախատեսված գործողությունների վերաբերյալ տնօրենի հաշվետվությանը:
3. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2014-2015 ուստարվա գործունեությունը գնահատել բավարար:

Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի՝ 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (բյուջեի) հունվար-դեկտեմբեր կատարողականի մասին» հարցի կապակցությամբ Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա հանգամանալից ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի 2015թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի հունվար-դեկտեմբեր կատարողականը /Հավելված 2/:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրաբյանը, ստորաբաժանման ղեկավարներ: Նրանք արդյունավետ համարեցին կատարված աշխատանքները, կարևորեցին տվյալ սոցիալ-տնտեսական իրավիճակում մուհի բյուջեի օպտիմալ կազմումը և իրականացումը, գնահատելով կատարված աշխատանքները լավ:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

1. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2015 թվականի (հունվար-նոյեմբեր) եկամուտների և ծախսերի վերաբերյալ գործունեության տնօրենի հաշվետվությունը:
2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2015 թվականի եկամուտների և ծախսերի հաշվետվության գնահատումը կատարել հաշվեքննության արդյունքների հիման վրա և ներկայացնել հաստատման:

Լսեցին – « ԵՊՀ ԻՄ-ի` 2016թ. եկամուտների և ծախսերի նախահաշիվը (բյուջեն) հաստատելու մասին» հարցի կապակցությամբ տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա հանգամանալից ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի 2016թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագիծը /Հավելված 3/:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրաբյանը: Ելույթ ունեցողները կարևորեցին մուհի բյուջեի օպտիմալ պլանավորումը և հավանություն տվեցին ներկայացված նախագծիը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 13/3

1. Հավանություն տալ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2016 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը համաձայն հավելված 3-ի:
2. Հանձնարարել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենին 2016 թվականի եկամուտների և ծախսերի

տարեկան նախահաշիվը ներկայացնել Երևանի պետական համալսարան հաստատման:

Հսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի կատման մասին» տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը, նա կարևորելով ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման գործում հստակ ռազմավարությամբ առաջնորդվելու կարևորությունը ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի կատարողականը ըստ 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի /Հավելված 4/:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրաբյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ. Զաքարյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը: Ելույթ ունեցողները հավանություն տվեցին կատարված աշխատանքներն և առաջարկեցին ԵՊՀ ԻՄ –ի գործունեությունը 2011-2015թթ գնահատել բավարար:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 13/4

1. Հավանություն տալ 2011-2015թթ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի զարգացման ռազմավարական ծրագրով 2011-2015թթ. նախատեսված գործողությունների վերաբերյալ տնօրենի հաշվետվությանը:

2. Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրով նախատեսված գործունեությունը գնահատել բավարար:

Լսեցին - «ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի քննարկում» հարցի մասին տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը, նա ընդձեց, որ լինելով ԵՊՀ-ի միակ մասնաճյուղը, մեր ռազմավարական ծրագրի հիմքը պետք է լինի ԵՊՀ 2016-2020թթ. ռազմավարական ծրագրը և ներկայացրեց ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի նախագիծը /Հավելված 5/: Տնօրեն Ս.Ա. Առաքելյանը առաջարկեց բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին մանրամասն ուսումնասիրել նախագիծը և ներկայացնել գրավոր առաջարկություններ:

Արտահայտվեցին – ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանը, հեռակա ուսուցման բաժնի վարիչ Մ. Հ. Զուրաբյանը, բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ. Զաքարյանը, հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկան Վ. Ալեքսանյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ն. Խուդավերդյանը: Ելույթ ունեցողները հավանություն տվեցին ԵՊՀ ԻՄ-ի 2016-2020թթ. ռազմավարական ծրագրի ներկայացված նախագիծին և համաձայնեցին տնօրենի առաջարկին:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 13/5

Հանձնարարել մասնաճյուղի բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ մինչև 2016թ. Հունվարի 31-ը ստորաբաժանումների բոլոր աշխատակիցների մասնակցությամբ մանրամասն քննարկել ԵՊՀ ԻՄ-ի 2016-

2020թթ. ռազմավարական ծրագրի նախագիծը և ներկայացնել գրավոր առաջարկություններ մասնաճյուղի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին:

Ընթացիկ հարցեր

Լսեցին - «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողական նպաստների պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում փոփոխություն կատարելու համար ձևավորված հանձնաժողովի կատարված աշխատանքների մասին» հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 13/6

Ղեկավարվելով «ԵՊՀ» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 27-րդ կետի 11-րդ ենթակետով՝ «ԵՊՀ» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացման կանոնակարգում (հաստատված ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2014թ. սեպտեմբերի 17-ի նիստում) (այսուհետ՝ «Կանոնակարգ») կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Կանոնակարգի 13-րդ կետում կատարել լրացում և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում: Անհարգելի

պատճառներով (անբավարար գնահատական, չստուգված ստանալու կամ անհարգելի պատճառով քննությանը, ստուգարքին չներկայանալու, տնօրենի կողմից նկատողություն ունենալու դեպքերում) ակադեմիական պարտքերի մարման շրջանում քննություններ, ստուգարքներ հանձնած ուսանողները ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից չեն օգտվում:

2. Կանոնակարգի 33-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անվանական կրթաթոշակ նշանակվում է բակալավրիատի և մագիստրատուրայի առավել աչքի ընկնող, գերազանց առաջադիմություն (մագիստրատուրայի ուսանողների դեպքում հաշվի են առնվում նաև բակալավրիատում ցուցաբերած առաջադիմության արդյունքները) գիտական, հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին:

3. Կանոնակարգի 35-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Անվանական կրթաթոշակների տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի սկզբում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

Լսեցին –« ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում կառուցվածքային փոփոխություններ կատարելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին» հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա նշեց, որ հանձնաժողովը կատարել է իր վրա դրված պարտականությունները, ժամանակին ներկայացրել ԵՊՀ ԻՄ –ի կառուցվածքը, որն էլ հաստատվել է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի տարեվերջյան նիստում:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 13/7

Ընդունելի գիտություն:

Լսեցին - «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի զինանշանի, դրոշի, օրհներգի և հուշամեդալի էսքիզների, տեքստի և երաժշտության ստեղծագործման նպատակով ստեղծված հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին» հարցի կապակցությամբ ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ, տնօրեն Ս. Ա. Առաքելյանի հաղորդումը: Նա ներկայացրեց համապատասխան նախագծերը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 13/8

- Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հուշամեդալը համաձայն հավելված 6-ի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում N 13/9

- Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի դրոշը համաձայն հավելված 7-ի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում N 13/10

- Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի զինանշանը համաձայն հավելված 8-ի:

- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Լսեցին –

- ԵՊՀ ԻՄ տնօրինության կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին:
- ԵՊՀ ԻՄ ակադեմիական ազնվության կանոնակարգը հաստատելու մասին:

Արտահայտվեցին – գիտական խորհրդի քարտուղար Մ.Աթոյանը, իրավախորհրդատու, ԱԿԲ բաժնի վարիչ Ա. Հովհաննիսյանը:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն

Որոշում N 13/11

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենության կանոնակարգը համաձայն հավելված 9-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի 2005թ.-ի մարտի 18-ի թիվ 1 նիստում հաստատված Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի տնօրենության կանոնակարգը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Որոշում N 13/12

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ակադեմիական ազնվության կանոնակարգը համաձայն հավելված 10-ի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ _____ Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար _____ Ս.Ս. ԱԹՈՅԱՆ

26.12.2015թ.